



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել կրուքը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա կրուքը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

22283

ՊՐԱԼԵՏՐՈՆԵՐ ԲԱՐՈՐ ՅԵՐԳՐՆԵՐԻ ՄԵՋՆԵ Ք

Ա. Բ Ե Բ Ե Լ

# ԿՆՈՋ ՆԵՐԿԱ ՅԵՎ ԱՊԱԳԱ ՎԻՃԱԿԸ

Թարգմ. ասու. Ա. Թ.

396

F-41

սո. Ռ. Կ. Կ. Անգր. Յերկրային Կոմիտեի

Թ Ի Ֆ Լ Ի Ս

1924

23

396  
P-41  
u.w

Ա. ԲԵԲԵԼ

# ԿՆՈՋ ՆԵՐԿԱ ՅԵՎ ԱՊԱԳԱ ՎԻՃԱԿԸ

Թարգմ. սուս. Ա. Թ.



Հրատ. Ռ. Կ. Կ. Անդր. Յերկրային Կոմիտեյի  
Թ Ի Ֆ Լ Ի Ս  
1924

4619  
39

396 | ԲԵԲԵԼ  
P-41 | ԿԵՈՋ ՆԵՐԿԱ  
ՅԵՎ ԱՊԱԳԱ ՎԻՃԱԿԸ

2010

8029

# ԿՆՈՋ ՆԵՐԿԱ ՅԵՎ ԱՊԱԳԱ

## Վ Ի Ճ Ա Կ Ը

«Ամուսնութիւնը պետք է մասնավոր պայմանագրութիւն լինի»: Այս պահանջին մենք շատ ենք հանդիպում: Նա մեզ շատ արմատական է թվում և, իսկապէս, վերջը չափով այդպէս էլ է: Սակայն ներկա սոցիալական պայմաններում նման մասնավոր պայմանագրութիւնը կնոջ համար նույնքան նշանակութիւն ունի, վորքան այն հանրաձայնութ խոսքը, թե կինը կարող է իրեն համար ապրուստի միջոց դանել աշխատանքի բոլոր ասպարեզներում, վորոնք նրա ուժերին ու ընդունակութիւններին համապատասխան են: Թե առաջին և թե յերկրորդ դեպքում նա մի ճնշված արարած է. կնոջ անտեսապէս ազատ ճանաչելը և ամուսնութիւնն ու ամուսնալուծութիւնը հեշտացնելը չի կարող կնոջը պաշտպանել անտեսական ու հասարակական ճնշումից ու շահագործութիւնից: Քանի կինը իր սոցիալական (այսինքն



4619  
39

08

2002

Վ. Տ. Գ. Խ. Գլխիգր. Բաժ, 4-րդ սպարան, Գուշկ. փ. № 3.

անտեսական) կացութեամբ կատարելագետ ազատ չե-  
 և տղամարդուն հավատար, քանի նա գուրկ է տղա-  
 մարդու ունեցած քաղաքական իրավունքներէց, ա-  
 մուսնութեան մասնավոր բնույթը նույնքան ոգուտ  
 կը բերի նրան, վորքան ամենագեղեցիկ սահմանա-  
 դրութիւնը ժողովրդին, վորի իրավունքների ու ա-  
 գատութեան հետ խաղում են պետութիւնն ու տի-  
 րոջ դասակարգերը, վորոնց ձեռքին է գտնուում վոչ  
 միայն հարստութիւնը, այլ և Ֆիզիքական ու հոգե-  
 վոր իշխանութիւնը. նման սահմանադրութիւնը մի  
 թղթի կտոր է միայն: Ամուսնութեան մասնավոր պայ-  
 մանագրութիւնը ներկա պայմաններում ավելի շուտ  
 պտանգավոր է, քան ոգտակար կնոջ համար:

Բուրժուական հասարակութիւնը յերբեք չի հա-  
 մաձայնի ամուսնական պայմանագրութիւնը միան-  
 դամայն մասնավոր համարելու, վորովհետև ամուս-  
 նութիւնն ամենասերտ կապով կապված է բուր-  
 ժուական անտեսական հարաբերութիւններին հետ և  
 նույնիսկ նրանցից է բղխում: Նա մասնավոր չի  
 համարում նրան, չնայած, վոր ամուսնական պայմա-  
 նագրութեան անհավատարմութեամբ խախտելու դեպ-  
 քերը շատ են, և, իսկապես, շատ ել պետք է լինեն,  
 վորովհետև ամուսնական պայմանագրութիւնն իսկա-  
 պես մի ստիպողական հաստատութիւն է. շատերն  
 ամուսնանում են վոչ թէ ներքին հակումներէց զբո-  
 ված, այլ հաշիվներէց: Իր անտեսական ու սոցիալա-

կան դրութեան շնորհիվ տղամարդն իշխող է հանդի-  
 սանում, և հենց այդ է պատճառը, վոր նա այնքան  
 ազատ է պահում իրեն կնոջ վերաբերմամբ. զրանով  
 է բացատրվում և այն, վոր ամուսնական հավատար-  
 մութեան խախտումը մեծ մասամբ տղամարդու կող-  
 մից է տեղի ունենում. նույն բանով է բացատրվում  
 և կնոջ պատիվ դերն ամուսնական կյանքում: Յեթե  
 տղամարդն ամուսնութեան սրբութիւնը խախտում է,  
 այդ հանցանքը սովորաբար անհետևանք է մնում նրա  
 համար. կինը մեծ մասամբ ստիպված է լինում հաշտ-  
 վել տղամարդու անհավատարմութեան հետ, վորով-  
 հետև նա նրանից կախումն ունի. չէ վոր նա յե  
 կնոջ գոյութեան ու իրավունքներին հենարանը: Իսկ  
 յեթե կինն է թողնում ամուսնուն, այն ժամանակ  
 մեծ մասամբ նա անձար վիճակի մեջ է ընկնում,  
 վոր նրա համար ուղղակի ճակատագրական և դառ-  
 նում, յերբ նա յերեխաների տեր է: Վորքան ել նա  
 իր պատվի ու արժանապատվութեան զգացումով  
 առաջնորդվելով՝ մաքուր կյանք վարի, այնուստենայ-  
 նիվ «հասարակութիւնը», չնայած նրա մաքրու-  
 թեանը, նրա վրա պիտի նայի, վորպես մի կիստար-  
 տաքսիվածի վրա և պիտի արհամարհի նրան. միայն  
 շատ քիչ դեպքերում է նա ցավակցութեան հանդի-  
 պում: Ի հարկէ, պաշտոնական ապահարգանից հետո  
 նա կարող է նորից ամուսնանալ. բայց վոր տղա-  
 մարդը կամուսնանա ամուսնուն թողած կնոջ հետ,

ժանտալանդ յեթե նա յերեխաների տեր է: Միայն կնոջ նյութական կարողությունը կարող է նրան գրավիչ դարձնել. բայց այդ դեպքում կապվում են վոյթե կնոջ, այլ նրա կարողության հետ. իսկ տղամարդն առանց գովարության մի ուրիշ կին է գրտնում կամ, առանց մեծ պարտավանքի արժանանալու, ազատ կենակցում զանազան կանանց հետ: Հենց այս է տղամարդու և կնոջ տարբերությունը:

Սյուպլիսի պայմաններում կինը պետք է համբերությամբ տանի ամուսնական կյանքում պատահող բոլոր ստորացումները: Նա կարող է ըմբոստանալ միայն չայն դեպքում, յերբ ունի ծնողներ, ազգականներ կամ այնպիսի նյութական միջոցների տեր է, վոր կարող է նեցուկ լինել նրան: Բայց այդ դեպքում նա շատ վերափորանքների յե հանդիպում, վորովհետև ծնողների ու ազգականների կարծիքով ամուսնուց բաժանված լինելը կնոջ համար ամենամեծ դրժբխատությունն է: Իսկ յերբ կինն ոգնության հույս չունի, նա ամեն վերափորանքի համբերում է, ամուսնու բոլոր քմահաճույքները տանում, մինչև անգամ կոպտություններն ու վատ վերաբերմունքը, ինքն իր աչքում ստորանում, ապա միայն վերջին քայլում: Յեթե նա յեռանդի տեր է, աշխատում է դորժ գնել իր միակ դենքը — լեզուն: Կնոջ լեզուն, վոր առած է դարձել, ինչպես նաև բանաստեղծների գովարանած կանացի համբերությունն ու հեզությունը, միայն

տղամարդու բռնակալության հետևանք է, վոր գարգացել ու ժառանգաբար անցել է հազարամյա բնական ընտրության միջով: Համբերությունը, հեզությունը և զիջողականությունը դեպի տղամարդը մեծ մասամբ վոյթե բարեմասնությունն է, այլ թուլության ու արատի հետևանք:

Կնոջ վերաբերմամբ տղամարդու բռնակալությունը նման է բուրժուայի բռնակալությանը պրոլետարի վերաբերմամբ. շատ դեպքերում առաջինը նույնիսկ գերազանցում է յերկրորդից: Պրոլետարն իր բանվորական ուժը ծախում է գործատիրոջը ժամանակավորապես. յեթե նա գժգոն է, կարող է մի ուրիշի, ավելի լավի մոտ գնալ աշխատելու: Մինչդեռ կինը իր ամուսնու հետ կապված է հավիտենապես: Մինչև անգամ այն դեպքում, յերբ նրանց մեջ ամեն որ, ամեն ժամ վեճ ու կռիվ է տեղի ունենում, կինն ստիպված է իր շղթաները կրել մինչև մահ-գերեզման: Պրոլետարն ավելի անկախ է զզում իրեն բուրժուայի հանդեպ, քան կինը տղամարդի. նա ավելի հեշտ կարող է իր համար իրավունքներ ու հարգանք ձեռք բերել և, կարիք յեղած դեպքում, այդ իրավունքները նվաճել, միանալով իր նմանների հետ: Այլ է կնոջ դրությունը: Նա ստիպված է համբերությամբ տանել ամեն վերափորանք, որենքը նրան ավելի քիչ է պաշտպանում, քան պրոլետարին և այն ել ծայրահեզ դեպքերում: Իսկ յերբ այդ որենքը միջամտում

և, ամուսնալուծութեան վորոշումն է կայացնում. բայց այդ ամուսնալուծութիւնը կնոջը շքավորութեան գիրկն է նետում և անողնական վիճակի մասնում, իսկ աղամարդին հաճելի հնարավորութիւն տալիս յերկրորդ անգամ ամուսնանալու:

Պրոլետարը, վորպէս շտիտանա աղամարդ, անսահման ազատութեամբ ոգտւում է իր անհատականութեանը. նա ոգտւում է իր քաղաքական ու սոցիալական իրավունքներին (վորքան էլ դրանք չնչին լինեցին), վորոնք նրա ձեռքին դնելը են՝ իր շահագործողներին դեմ կռուելու: Մինչդեռ ամուսնու հետ կապված կնոջ վրա նայում են վորպէս մի յերեխայի, մի անողնական արարածի վրա. նա աղամարդու խնամակալութեան տակ է գտնւում, նա իրավագործ է, վորովհետև նրան քաղաքականապէս և վորպէս քաղաքացի համարում են անշտիտանա: Քաղաքացիական սրենքները բոլոր ժողովածուները կնոջն ամուսնու խնամակալութեան յենթակա յեն համարում և թույլ չեն տալիս իր անձի ազատ տերը լինելու, իրավունք չեն տալիս առանց ամուսնու թույլտվութեան վկայութեան տալու գատարանում: Քաղաքականապէս իրավագործ լինելով հանդերձ, կինն իր սթիտով ամուսնուն քաղաքական իրավունքներ է տալիս, յեթե այդ իրավունքները գուրբի ցենդի հետ են կապված: Կերմանիայում Սաքսոնիայի և այլ տեղերի գավառային սրենքները, վորպէս բացառութիւն, կնոջն ակ-

տիվ բնարդական իրավունք են տալիս (ընտրելու իրավունք: Ա. Թ.), յեթե նա կալվածատեր է և ամուսինն չունի, սակայն պատսիվ իրավունք (ընտրվելու իրավունք: Ա. Թ.) չեն տալիս: Բայց հենց վոր նա ամուսնանում է, այդ իրավունքից զրկւում է և իրավունքն անցնում է ամուսնուն, յեթե նա նույնիսկ վոչ մի սեփականութիւն չունենա: Ամուսինը կնոջ տերն է, նրա «յետը» աղամարդու «յետի» հետ է ձուլւում: Ամուսնանալիս աղամարդը կնոջը հավատարիմ լինելու յերդում է տալիս, այնինչ կինը վոչ միայն հավատարիմ մնալու, այլև հպատակվելու յերդում է տալիս: Կնոջ այդ սարկական գրութիւնն իր արտահայտութիւնը գտնում է վոչ միայն յեկեղեցական ամուսնութեան, այլև քաղաքացիական ամուսնութեան գեպքում. այդ ձևի ամուսնութիւնն էլ է հպատակութեան յերդում պահանջում կնոջից:

Տղամարդու վիճակը բոլորովին այլ է: Կնոջ անհավատարմութիւնը համարվում է մեծ հանցագործութիւն, մինչդեռ աղամարդուն—մի չնչին մեղք: Ամուսնական հավատարմութիւնը խախտելու ազատութիւնը վերազանված է աղամարդուն սովորութի ույժով, մինչև իսկ կնոջ կողմից: Այսպէս, որինակ, նրանք մինչև ամուսնանալը աղամարդու հետ սեռական հարաբերութիւն ունենալը համարում են ինքն ըստինքյան հասկանալի մի բան և յերբեմն նույնիսկ զովասանքի արժանի մի վարմունք: Կան

կանայք, վորոնք հպարտանում են, յերբ նրանց վերջապես աջողվում է տղամարդ «ձեռք գցել»։ և մեր «բարձր խավերի» տղամարդը հաճախ իրեն համար կանոն է դնում ամուսնանալ միայն «կյանքի բոլոր քաղցրությունները ճաշակելուց հետո», այլ խոսքով՝ միայն սեռական ծայրահեղ հագեցումից հետո, յեւբ նա կիսով չափ կամ կատարելապես ինվալիդ է դարձել և կարիք է զգում կնոջ, վորպես զթուփյան բրոջ հոգատարության։ Եստ կանայք լսելայն ներում են իրենց ամուսինների սեռական հանցագործությունները և գոհ են մնում, յեթե դա վորոշ սահմաններից չի անցնում և արտաքին քաղաքավարությունը պահպանվում է, և յեթե տղամարդը չի արհամարհում իր ամուսնական պարտականությունները։

Հարյուր յերիտասարդից ինրսուն իննը կհրաժարվի այն աղջկանից, վորն ուրիշ տղամարդու հետ առաջ կապ է ունեցել։ Մինչդեռ իրենց նկատմամբ նրանք այդ բանն այնքան են բնական համարում, վոր յեթե ամուսնացող յերիտասարդը հայտարարում է, թե ինքը յերբեք սեռական հարաբերություն չի ունեցել, ծաղրի յե յենթարկվում վորպես հիմար։

Վոչ սի բան այնքան վրասակար չէ, վորքան բնության պահանջներն ու իրավունքներն արհամարհելը։ Սեռական հարաբերությունը լիակատար հասունության շրջանում նույնքան անհրաժեշտ է, վորքան

ուտելն ու խմելը, հանգիստն ու քունը. յեթե սեռական ձգտումը զսպվում է և անբնական ճանապարհով բնթացք արվում նրան, դրանից առողջությունը քայքայվում է։ Բայց արդյոք միայն տղամարդուն է բնությունն իր պահանջներն առաջադրում։ Վորտեղից են հասունության հասած այնքան հիվանդոտ կամ հիվանդ կանայք, յեթե վոչ սեռական ձգտումը զսպելուց և նրան չբավարարելուց։

Տղամարդը, յեթե նա կրթությամբ ամոթխած չէ, յեւք է վորոնում իր սեռական պահանջը բավարարելու և հեշտությամբ ել գտնում է. իսկ կնոջից նա պահանջում է, ծանր արհամարհանքի սպառնալիքի տակ, վոր նա բռնի կերպով ճնշի իր հակումները, մինչև վոր առիթը նրան ամուսին տա։ Յեթե նա ամուսին չի կարողանում գտնել և «պառաված սրիորդ» է դառնում—մի զժբախտ արարած աշխարհիս յերեսին, վոր ծաղրի յե յենթարկվում թե իր յերջանիկ ընկերուհիների և թե տղամարդկանց կողմից—այդ դեպքում նրանից ավելի շատ է առաքինությունն ու ժուժկալությունն պահանջվում։ Նրան հին կահ-կարասիք են համարում, մի իր, վոր հասարակության համար միանգամայն անպետք է։

Իրապես, ներկա պայմաններում, կնոջ սեռական ժուժկալությունը, յերբ նա սենտիմենտալության բողով չէ պատած, տղամարդու յենականությունից բղիոզ բռնության հետևանքն է միայն։ Նա սեռա-

կան մարքութիւնն և պահանջում վոչ միայն նրա համար, վոր այդ նրա յեսականութեանը հաճելի յե, այլ և նրա համար, վոր յերաշխիք ունենա, թե նա ուրիշի սիրո պտուղը չե իր արտադրութիւնը համարելու և իր վրա առնելու դրանից բղխող քաղաքացիական պարտականութիւնները: Իսկ ինքն, ընդհակառակը, մեծ մասամբ իր արժանատիութիւնից ստոր և համարում անձամբ նույն զոհարերութիւնն անել: Շնորհիվ իր գերիշխող դրութեան, նա անպատիժ կերպով հանցագործութիւններ և թույլ սայիս իրեն, իսկ կանայք, շնորհիվ իրենց կախման և համատարած նախապաշարումների, ստիպված են հաշտվել այն մտքի հետ, վոր ամուսնանալու յեն հանցագործի հետ:

Մյս և գոյութիւնն ունեցող հասարակական հարբերութիւնների հետեանքը: Հասարակական կարծիքը, վորի արտահայտիչը զլիաւորապէս տղամարդիկն են, այնքան ուժեղ և, վոր կանայք ակամա հպատակվում են նրան և նույն իսկ ձայնակցում ուրիշներին, յերբ «ընկաձներին» գատապարտում են: Զոհին պատրաստ են քարկոծելու, իսկ հանցագործը փայլող գեմքով վերադառնում և հասարակութեան գիրկը, և տղամարդկանց ստեղծած սրենքները խրախուսում են նրան նոր հանցանքներ գործելու: Յեւ այս բանը քաղաքացիական բարոյականութիւնն և կոչվում:

Բռնի կերպով ճնշված սեռական պահանջը բազմաթիվ վնասակար հետեանքներ և ունենում, վոր պատճառ և դառնում հիստերիկայի և անազին քանակութեամբ մարդիկ ուղարկում գժանոցները:

Լյուտերը, վորն իր տերտերական բժամտութեամբ այնքան չարիքների պատճառ դարձավ, այդ Ֆրիդրայէս առողջ տղամարդը, վորը վանքում սեռական ժուժկալութեան եր յենթակա, շատ լավ եր հասկանում սեռական հարբերութեան բացակայութեան և կուսական կյանքի ամբողջ անհեթեթութիւնն ու անբնականութիւնը: Նրա արտահայտած կարծիքը ամենաճիշտն ու ամենալավն և այդ հարցի մասին սոված բոլոր կարծիքների մեջ: Նա ասում է. «Կինը չի կարող սուանց տղամարդու կյանք տնենալ, ինչպէս չի կարող ապրել առանց ուտելու, խմելու, քնելու և այլն: Մյուս կողմից տղամարդն ել և կնոջ կարիքն զգում: Պատճառն այն և, վոր մարդու բնութեան մեջ նույնքան ուժեղ և վորդեծնութեան պահանջը, վորքան ուտելն ու խմելը: Յեւ հենց այդ պատճառով ել տատված տվել և մարդուն զանազան անգամներ, անոթներ, նյարդեր և այն ամենը, ինչ վոր կյանքի համար անհրաժեշտ է: Ով գրան ուզում և խոչընդոտ հանդիտանալ, խելացի բայլ չի անում, վորովհետե կա նույնն և, յեթե մարդ ուզենա բնութեանն ստիպել, վոր նա բնութիւնն չլինի, կրակին ստիպել, վոր շայրի, մարդուն—վոր չուտի, չխմի, չքնի»:

Բայց հասարակական պայմաններն այնպես են դասավորված, վոր նրանք խոչընդոտ են հանդիսանում գլխավորապես կնոջ սեռական պահանջներին: Վոչ միայն նրա սոցիալական դրուժյունն է ստիպում, թե արդյոք ամուսին կարող է նա զանեւ, թե չէ, վորին գուցե և չափտի սիրի, այլ և ինքը, հասարակությունն է պատերազմով ու արտագաղթով հոգում այն մասին, վոր սեռերի հարաբերությունը կնոջ համար աննպաստ ուղղութեամբ դասավորվի: Բնության մեջ այդպիսի անհամաչափություն (ի վնաս կանանց սեռի) գոյություն չունի, վորովհետեւ ստատիստիկան սպասեցուցում է, վոր 100 աղջկանը 105 ազալ է բնկնում, այսինքն՝ նույնիսկ տղաների թիվը աղջիկների թվից մի փոքր զեւ ավելի յե: Մյուս կողմից, 1872 թվի ժողովրդական աշխարհագիրը ցույց է տալիս, վոր կանանց սեռը թվով գերակշռում է տղամարդկանց, այսինքն՝ 20,906,739 կնոջն բնկնում է 20,151,902 տղամարդ: Կանանց սեռն, այսպիսով, 750,000 հոգով ավելի յե տղամարդկանց սեռից և դա վերաբերում է չափահասներին, մինչդեռ, ինչպես թվերն են ցույց տալիս, նորածին տղամարդիկ քանակով գերազանցում են կանանց: 1890 թ. զեկտեմբերի 1-ին Գերմանիան ուներ 24,230,832 տղամարդ և 25,197,638 կին. կանայք 966,806 հոգով ավելի էին տղամարդկանցից: Ինչպես արդեն ասացինք, պատերազմն ու արտագաղթը այդ յերևույթի գլխավոր պատճառներն են: Այս յերևույ-

թից պարզ յերևում է, վոր գերմանացի կանանց մի խոշոր թիվ դատապարտված է չամուսնանալու: Այդ թիվն ավելի յե մեծանում նրանից, վոր շատ յերիասարգներ անսեռական թե այլ պատճառներից հրաժարվում են ամուսնությունից:

Իրանից զանազան անբնական դրություններ են առաջանում. կանանց շրջանում չամուսնանալու վտանգը տարեցատարի աճում է ժամանակակից պայմաններում, և յերբեք չի կարելի դատապարտել շատ աղջիկներ ունեցող բնտանիքներին, վորոնք առնչին յերկյուղով են նայում սպագային: Մյուս կողմից, այդ պայմանները կնոջ մեջ զարգացնում են բնավորութեան աքնախիսի գծեր, ինչպես պճնվելու ցանկությունը, սնափառությունը, տղամարդ վորսալու ձրգտումը, սաստիկ խանդը, վոր հաճախ ծաղրի ու դատապարտութեան է արժանանում, բայց հենց ինքն այդ պայմանների ծնունդն է: Այս ամենի պատճառով անառակութեան համար մեծ ասպարեզ է բացվում:

Կնոջ բնավորութեան այդ վատ գծերը, վորոնք այնքան հաճախ դատապարտվում են հասարակութեան կողմից և տիպիքական են դարձած, հեշտ կարելի յե բմբռնել, յեթե նկատի առնենք, վոր գրանք բնական անհրաժեշտութեամբ բղիում են կնոջ կյանքի պայմաններից:

Բուրժուական հասարակությունը կարող է ձաղկել ու ծաղրել այդ գծերը—և նա բավական բնդարձակ

շափով այդ կատարում է,— սակայն նա անգոր և նրանց փոխելու կամ վերացնելու, փարովհետև նրանց պատճառը հենց ինքն է: Կնոջ բնավորութեան այդ գծերը միայն այն ժամանակ կը վերանան, յերբ բուրժուական հասարակութեան սեղ կը հաստատվի մի նոր, առողջ ու նորմալ հասարակարգ:

Նույն հասարակական պայմանները, փորձք այնքան աննպաստ ազդեցութիւնն են գործում կնոջ ազատ զարգացման վրա, ազամարդուն նպաստում են, — մանավանդ յերբ նա նյութապես բավականաչափ ապահով է, — ազատութիւնն տալ իր սեռական հակումներին. զրա համար ամուսնութիւնն անպամ, ինչպես ամենքին հայանի յի, արգելք չի հանդիսանում, և շատ հաճախ այն պատճառով, փոր ամուսնանալու շարժառիթն իսկական սերը չի յեղել: Հիշեցնենք, բացի զրանից, թե ինչ ստոր ու անբարոյական միջոցներ են սովորաբար գործադրվում, բարձր գասակարգի «հին տերերի» մեծամասնութեան կողմից, իրենց բխացած զգայութիւնները զրգուելու համար:

Կնոջ նյութական կախումը և նրա հոգեկան ահասութիւնը, փոր անպարզկանց կողմից զխամամբ պահպանվում է, կապված այն փաստի հետ, փոր անվստահութիւնն ու գոյութեան համար մղվող կռիվը ստիպում են տղամարդկանց՝ ներկա սոցիալական պայմաններում՝ ամուսնութեան վրա նայելու ամենից առաջ փողային տեսակետից, կնոջը գարձում են

ապրանք: Իսկ ամուսնութեանը անտրական մի ստորակու Բնական, այսինքն՝ իսկապես բարոյակուն տեսակետը յերկրորդական սեղ և բնուում: Կինը միանգամայն կախման մեջ է ընկնում ազամարդուց:

Այսպիսով ներչա հասարակութեան մեջ սեռերի միջև գոյութեան ունեցող հարաբերութիւնները նույնքան վատառոջ են, փորքան բուրժուացիայի և պրոլետարիատի միջև յեղած հարաբերութիւնները: Տղամարդն իրավունքների սեր է, կինը միայն պարտականութիւնների:

4619  
39

Բայց փորքան էլ վատաակար, նույնիսկ անբնական է այդ գրութիւնը ամենաբարձր մարդկայնութեան տեսակետից, այնուամենայնիվ նա հասկանալի ու միակ հնարավոր կացութիւնն է ժամանակակից հասարակութեան տեսակետից: Կանանց կախումը ազամարդկանցից հետևանք է նույն պայմանների, ինչ պայմանների հետևանք է պրոլետարի կախումը բուրժուացից: Մասնավոր սեփականութեան աշխարհը պրոլետարների կարիք ունի՝ սեփականութիւնն արտադրելու համար, բայց նա պահանջում է նաև որինական զավակներ՝ այդ սեփականութիւնը ժառանգելու: Բուրժուայի համար սեփականութեան կուտակումը վոչ միայն նպատակին համնելու միջոց է, այլ նաև ինքնանպատակ. նրան ժառանգ է պետք վոչ թե նրա վերջին կամքը կատարելու, ինչպես հոովմայեցիների մեջ էր ընդունված, այլ նրա սե-



փականութիւնն ընդունելու համար: Դա նշանակում է, զոր բուրժուան իր մահից՝ հետո ել ե սեփական նստակ, զերեզման մանելուց հետո ել ե նա շարունակում իր կյանքը ժառանգ ծնելով կինը նրա արտագրութիւնն զոր ծիրենբից մեկն ե հանդիսանում:

Յեւ այդ պատճառով նա միայն այն ժամանակ ե ամուսնանում սիրուց զրգոված, յերբ զրավվելով կեռջ հրաշալիքներից, նա, միաժամանակ, նրա ոժիտով իր սեփականութիւնն ավելացնելու ազան ճրգտունն ե բախարարում: Այլ խոսքով ամուսնութիւնը նրա համար մի առեարական ձեռնարկութիւնն է, զորին նա մտենում ե նույն հաշիվներով, ինչպես այլ ձեռնարկութիւններին: Նա կինն ե վերցնում ասանց վորեւ զրավչութիւնն ու սիրո, յեթե կինը հարուստ ոժիտ ե բերում ե նրան հույս ներշնչում, թե որինական ժառանգներ կը սա նրան:

Ամուսնութիւնն այդ բուրժուական բնույթը, զոր հիմնոված ե անտեսական հարաբերութիւններին վրա, թափանցել ե հասարակութիւնն բոլոր խավերը: Միայն ամենաստորին խավերում, վորտեղ սեփականութիւնն հարցը մեծ մասամբ դեր չի կատարում, ամուսնութիւնը զգացմունքի մաքուր արտահայտութիւնն հետեանք ե հանդիսանում: Այստեղ կեռջ ե սղամարդի միջն հալասարութիւնը, յեթե վոչ իրավագետ — վորովեւեւ այստեղ ես իրենց ուշքը պահպանում են յոլոր բուրժուական քաղաքացիական ձեերը — գոնե

փաստորեն ավելի մեծ շափով ե յերեան գալիս, քան բարձր գասակարգերի մեջ: Ամուսնական հարաբերութիւնների խախտում, այսպիսով, հասարակութիւնն ստորին խավերում ավելի քիչ ե յերեան գալիս վորպես սեռական անառակութիւնն հետեանք, ավելի հաճախ նա հետեանք ե նյութական կարիքի ե նրանից բղտող շարիքներին — վատ գաստիարակութիւնն, կոպտութիւնն ու հարեցողութիւնն: Այս բոլոր դեպքերում պրոլետար կինը կրկնակի յե տուժում — թե վորպես կինն ե թե վորպես պրոլետար:

Այստեղից պարզ յերեում է, զոր ամուսնական պայմանագրութիւնն մասնավոր բնույթը կնոջն առանձին ոգուա չի բերի, ինչպես պրոլետարին անտեսական ազատութիւնն հայտարարելը: Վերջինս ոգտավետ ե միայն կապիտալիստի համար. նմանապես ե ամուսնութիւնը, վորպես մասնավոր պայմանագրութիւնն, ավելի մեծ իշխանութիւնն ե տալիս աղամարդուն կեռջ վերաբերմամբ: Այս դեպքում մենք միանգամայն աչքաթող ենք անում այն հանգամանքը, զոր բուրժուական հասարակութիւնը, հազվի ասնելով մասնավոր սեփականութիւնը ե նրա հետ կապված ժառանգական իրավունքը, անկարող ե այս ձեի ամուսնութիւնն հետ հաշավել: կինը միայն այն ժամանակ կարող ե իսկապես հավատարմել աղամարդուն, յերբ վոչ միայն իրավաբանորեն, այլև անտեսապես կը հավասարեցվի նրան, յերբ նա

մարդկային նույն իրավունքներով կոգավի, ինչպես  
տղամարդը, յերբ հասարակական հարաբերություն-  
ներն անհնարին կը դարձնեն տղամարդու համար  
կնոջ նկատմամբ տնը հանդիսանալը, ինչպես այդ  
գոյություն ունի այժմ, յերբ նա իր կնոջ կերակրողն է:

Այն հասարակարգը, վոր վոչ ճնշող, վոչ  
ճնշված ունի իր մեջ, վոչ միայն քաղաքական, արն-  
տեսական ու կրօնական ասպարեզում այլևս սեռե-  
րի հարաբերության մեջ— սոցիալիստական հասարա-  
կակարգն է:

Միայն սոցիալիստական կարգերում կարող է  
կինը, ինչպես և ամեն մի ճնշված, լիակատար մարդ-  
կային իրավունքներ ունենալ. սոցիալիզմը նպատակ  
ունի անասնման կերպով զարգացնելու հասարակու-  
թյան ըողոր անդամների, նմանապես և կնոջ, ուժերն  
ու ընդունակությունները. նա հասարակության բո-  
լոր անդամներից, ինչպես և կնոջից, պահանջում է  
իրենց ուժերն ու ընդունակությունները գործադրել  
մտահանուր ոգաի համար. նա իր բոլոր անդամներին,  
ինչպես և կանանց հավասար ըստին և հասկացնում  
ընդհանուր աշխատանքի արդյունքի ու յեկամուտի  
մեջ: Միայն սոցիալիստական կարգերում կարող է  
սերը, մարդկային այդ ամենաազնիվ զգացումը զար-  
գանալ լիովին ու կատարելապես. բոլոր մնտաի նա-  
խապաշարումները, յերջանիկ ընտանեկան կյանքի  
բոլոր խոչընդոտները վերացվում են, կինն ու տղա-

մարդն իսկապես իրավահավասար են, վիայն փոխա-  
դարձ հակումն ու համակրությունն է ամուսնական  
կապով մարդկանց կապողը: Ինչքան հեռու յե այս  
ամենը ներկա պայմաններից: Վորքան հաճախ են  
ամուսնության ներկա ձևի ընթացքում անվերջ տա-  
րածախություններն ու վեճերն ամուսինների մեջ,  
վորոնք հաճախ կապիտ բնությունների ու հանցա-  
գործությունների պատճառ են դառնում: Վորտեղ  
սեր չկա (վորովհետև ամուսնությունը հենց սկզբից  
բունի ամուսնություն է յեղել, այսինքն այնպիսի  
կապ, վոր կնքվել է միայն նյութական կամ դասա-  
յին հաշիվներից զրգված), այնտեղ շատ շուտով  
սասնություն է առաջ գալիս ամուսինների մեջ,  
ստանձնապես այն դեպքում, յերբ կողմերից մեկը  
մյուսի նկատմամբ ստիպված է լինում զանազան պար-  
տականություններ հանձն առնել, վորոնք խանգա-  
րում են նրա կամքի ինքնորոշմանը և մյուս հա-  
կումների բավարարմանը: Յերբեմն պարապությունը  
կամ ստատիկ փարթամ կյանքը փոխադարձ հագեցումն  
է առաջ բերում և պատճառ դառնում սիրո մեջ բազ-  
մազանություն վորոնելու. յերբեմն էլ ամուսնու-  
թյունը խախտվում է բնավորությունների անհամա-  
պատասխանության ու փառ զժերի պատճառով, վոր  
յերեան և գալիս միայն ամուսնության ընթացքում.  
շատ անգամ, յերբ կրքի առաջին թափն անցնում է,  
զրսևորվում է հայացքների ու կրթության չափա-

զանց մեծ տարբերութիւնն ու հակադրութիւնը-  
 յերբեմն ել շափագանց ծանր նյութական պայմանները  
 հնարավորութիւն չեն տալիս այն ձևով ապրելու,  
 վորին մարդիկ ընտելացած են: Մի խոսքով՝ բազմա-  
 թիվ պատճառներ կան, վորոնք, հետևանք լինելով  
 կամ նյութական պայմանների, կամ զանազան, հա-  
 ճախ արհեստականորեն առաջացած հոգեկան պա-  
 հանջների ու հայացքների, ներկա ամուսնութեան մեջ  
 այնպիսի դրութիւն են ստեղծում, վոր հաճախ ան-  
 տանելի տանջանք ե դառնում յերկու կողմերի հա-  
 մար ել և այլասերող ազդեցութիւն են ունենում  
 ընտանեկան կյանքի ու զավակների դաստիարակու-  
 թեան վրա, վորը, սակայն, անհնար ե դարձնում  
 միակ խելացի միջոցը գործադրելու, այն ե՝ ապա-  
 հարզանի դիմելու յերկու կողմերի համաձայնութեամբ,  
 մի բան, վորին խոչընդոտ են հանգիստանում զանա-  
 զան նախապաշարումներ: Նման դժբաղդ գեպքերը և  
 ամուսնական յերջանկութիւնը խախտող պայմանները  
 սոցիալիստական հասարակութեանը խորթ են լինելու.  
 յեթե, վորպէս բացառութիւն, նման գեպքեր տեղի  
 ունենան, նրանց լուծումը դժվար չե լինելու: Ամուս-  
 նութիւնը, այս բառի իսկական նշանակութեամբ,  
 մտանավոր պայմանագրութիւն ե, վոր կապվում ե յեր-  
 կու, միանգամայն հավասարազոր կողմերի մեջ և վորը  
 կարող ե լուծվել առանց վորեւ արտաքին արգելք-

ների; հենց վոր ամուսինների հարաբերութիւններն  
 անհրաժեշտ են դարձնում այդ բանը:

Վոչ մի բան չի կարող ավելի անբարոյական լինել,  
 քան այն, վոր մարդիկ, վորոնք իրար համար անտանելի  
 յեն, իրար միանգամայն անհամապատասխան՝ բռնի կեր-  
 պով կապված են մտում իրար հետ իրենց ամբողջ կյանքի  
 ընթացքում: Դրանից տուժում ե վոչ միայն նրանց  
 ընավորութիւնը, վորը նման բռնի կացութեան մեջ  
 ամենալատ հակումներն ե ստանում, այլ և բոլոր  
 շրջապատողները, տոանձնապէս յերեխաները: Վոչ մի  
 բան այնքան ճնշող ու անբարոյականացնող ազդե-  
 ցութիւն չի գործում՝ յերեխաների վրա, քան իրենց  
 ծնողների ամենորոյա սրինակը, վորոնք իրար հետ վար-  
 վել չկարողանալով, շարունակ յերեխաների ներկայու-  
 թեամբ իրար կշտամբում են, ատելութիւն արտա-  
 հայտում կամ ավելի վատ վերարբերմունք ցույց տա-  
 լիս. այդ բանը յերեխաների մեջ մեռցնում ե գեպի  
 ծնողներն ունեցած հարգանքը և հաճախ աններգաշ-  
 նակութիւն մտցնում նրանց մտապ հոգում:

Վոչ մի բան այնպէս խիտ չի գատապարտում  
 բուրժուական ամուսնութեան բոնադատական բնույթը,  
 վոր արդյունք ե անտեսական հարաբերութիւնների,  
 վորքան այդ և նման փաստերը, վորոնք (և այդ ուրանալ  
 անկարելի յե) շատ ամուսնութիւնների հատկանիշն  
 են կազմում: Բուրժուական հասարակութիւնը մի-  
 ջոցներ չունի, չի յել կարող ունենալ, իրերի այդ ըն-

թացքը փոխելու: Laisser fair-ը այս դեպքում ևս բուրժուական իմաստութեան բարձրագույն աստիճանն է:

Սոցիալիստական հասարակութեան մեջ ամուսնութեանը ամենամաքուր հարաբերութեանն է, վոր փոխադարձ հակումների արդյունք է, մի հարաբերութեան, վոր առաջանում է միանգամայն իրավահավասար ու փոխադարձաբար իրար հարգող անհատների միջև: Այդպիսի ամուսնութեանը անհամեմատ ավելի ու անսահման բարձր բարեյական հիմք ունի, քան ժամանակակից ամուսնութեանների մեծամասնութեանը, վորովհետև նրանով մարդիկ կապվում են միմիայն իրար պատկանելու նպատակով: Սոցիալիստական հասարակութեան մեջ անկարող և գոյութեան ունենալ, ինչպես վերադրում են սոցիալիզմին նրա շարավիտ ու անմիտ հակասակորդները, «կանանց ընդհանուր սեփականութեան» ամփած բանը, մի գրութեան, վորի հենց անունը միայն կնոջ ամուսնույն ստորացումն է նշանակում: Այդպիսի գրութեան, սակայն, գոյութեան ունի այժմ մի քանի գոտակարգերի համար: Ընդհակառակը, անհամեմատ ավելի մեծ իրավունքով, ինչպես այդ հեշտ կտրելի յե ապացույցել, անբարոյական հարաբերութեան կարելի յե անվանել հենց այժմյան բոնի ամուսնութեանը: Ինչքան քիչ են այժմ այն ամուսնութեանները, վորոնք տեղի յեն

ունենում առանց նյութական կարողութեանն ու սոցիալական խավը հաշվի առնելու:

Ինչքան շատ են այն դեպքերը, յերբ կինը կապվում է վոչ թե սիրով, այլ այն պատճառով, վոր կյանքի պայմանները ամուսնութեանը դարձնում են նրա համար խեղճների խնամակալութեան տուն: Ինչքան բազմաթիվ են այն ամուսնութեանները, վորոնք այնպիսի մեծ հակասութեաններ են իրենց մեջ կրում, վոր բանը համնում է ապահարգանի, վորքան ել գա սննդապատ լիներ կնոջ համար: Ավելի հաճախ են հանդիպում այն ամուսնութեանները, վորոնց մեջ յերկու կողմերն ել լուելյայն համաձայնութեան են գալիս «հասարակական խոյառուակութեան չհասցնելու», նրկատի առնելով գանազան գործնական շահեր: Յեվ, վերջապես, վորքան շատ են այն ամուսնութեանները, վորոնց մեջ վոչ այնքան վեճերն ու տարաձայնութեանները, վորքան սառը, տաղակալի կյանքն է իշխում, սովորական «կողք կողքի» ապրուստը, վորի հետ հաշտվում են, վորովհետև ուրիշ յելը չկա: Ընտանեկան կյանքը ճանաչող վոր մարդը կարող և այս ամենը բացատել: Սակայն մարդիկ են գտնվում, վորոնք պնդում են, թե ամուսնութեան ժամանակակից ձեր ամենալավ և ամենանպատակահարմար, «սրբազան» հաստատութեանն է: Գերմանիայում 1873 թվին պրուսական ութ պրովինցիաներում իրար դեմ գատ բաց արած ամուսինների թիվը, վորոնց գործը քա-

հանային եր հասած, 7,325 եր, վորոնցից 2,829 հաշտ-  
վել էյին, շնորհիվ քահանայի «համոզելու շնորհքին»,  
3,377 մնացել էյին անհաշտ, իսկ 1,119 գործ գես  
լուծում չեյին ստացել: Այս թվերը միայն մի տար-  
վան են վերաբերում և միայն բողոքական բնակչու-  
թյանը, վորովհետև կաթողիկ յեկեղեցին, վորին պատ-  
կանում է բնակչության մի յերրորդ մասը, խստիվ  
մերժում է ասլահարգանք և համառ կերպով պահան-  
ջում, վոր մի անգամ կնքված ամուսնական կազակ-  
ցությունը պահպանվի մինչև վերջը: Բացի դրանից,  
վոչ վոք չի հավատա, թե քահանայի հաշտեցրած ա-  
մուսնիներն իսկապես հաշտված են: Նույն տարում  
վեճերի վերանորոգության 463 դեպք է յեղել, վորոն-  
ցից 267 դեպքում (ավելի քան  $\frac{3}{4}$ ) ամուսնիները  
մնացել են անհաշտ և 3,377-ի նման արգահարգանի  
ճանապարհը բռնել: Այս ցույց է տալիս, թե ինչ է  
այժմյան ամուսնության բարոյականությունը. իսկ  
քանի հազարավոր մարդիկ են խուսափում այդ ճա-  
նապարհից:

Սոցիալիստական հասարակության մեջ ամուս-  
նության պտուղները, յերեխաները, վորոնք այժմ  
ապաստարաններն ու ուղղիչ տներն են նետվում կամ  
մեծանում չքավոր բնակչության խղճուկ խրճիթնե-  
րում—չպիտի անդունդն իջնեն, ինչպես այժմ է աե-  
ղի ունենում. մյուս կողմից, նրանք չպիտի նմանեն  
մանկանոցներում ու պանսիոններում յերես տվածնե-

րին. նրանց հետ պիտի վարվեն վորպես թանգագին  
ծաղիկների հետ, վորոնք ուշադիր խնամք են պահան-  
ջում. սոցիալիստական հասարակությունը պիտի հոգա  
յերեխաների առաջադիմության ու խելացի զարգաց-  
ման մասին, չխանգարելով միաժամանակ ծնողական  
սիրո արտահայտությունը. պարտադիր ընդհանուր  
ուսումը պիտի ընդլայնվի և զառնա պարտադիր ընդ-  
հանուր դաստիարակություն:

Սոցիալիստական հասարակակարգում այժմյան  
հանցանքների ու պակասությունների վերացման հետ  
պիտի վերանա նաև մանկասպանությունը, վոր այժմ  
կատարում են ամենախղճուկ, դժբաղդ արարածները—  
հանապք, վորոնք խաբվելով իրենց զայթակղիչներից՝  
կամ վախենում են հասարակական կարծիքից, կամ  
միջոց չեն ունենում ծնած խղճուկ արարածին կե-  
րակրելու:

Կանհետանա աբորտը, սեփական «հանցանքը»  
ծածկելու այդ ստոր միջոցը, վոր սաստիկ տարած-  
ված է կրթված համարված կանանց մեջ և նպատակ  
ունի վոչնչացնելու այն յերեխաներին, վորոնց ան-  
կարող են «իրենց զիրքին համապատասխան» կրթու-  
թյուն տալ: Կը վերանա, վերջապես, անստա-  
կությունը, վոր որ որի ավելի յե ծավալվում,  
քանի ընտանիքը պահելու միջոց հայթայթելն ա-  
վելի յե դժվարանում, քանի կնոջ բանվորական  
ույժի արժեքն ավելի յե ընկնում և քանի յե-

բիտտասարդ տղամարդիկ, գանազան պատճառներով, ավելի ու ավելի յեն հրաժարվում բնտանեկան կյանքից և ավելի մեծ չափով են իրենց սեռական պահանջներին բավարարություն տալիս բնտանիքից դուրս:

Անա այն զլխավոր պակասությունները, վորոնք քանի գնում, ավելի մեծ չափով են բնդգրկում մեր հասարակությունը, աննկարագրելի չարիքներ պատճառում շատ բնտանիքների և վարակում ամբողջ հասարակությունը:

Մարդու ճնշված բնությունը, վոր ձգտում և ազատվել այն նեղ կապանքներից, վոր գրել են նրա վրա հասարակական ու նրա վրա հիմնված քաղաքական ու յեկեղեցական հաստատությունները, ստիպված և համաձայնել հանցագործություն կատարելու, վոր միակ յելքն և նրա համար: Բանի կերպով սխալ բնթացք ստանալով, մեր պայմանների անարդարությունից բղխող այդ հզոր գայրույթը հանցագործություն և առաջ բերում, վորը հասարակության կողմից պատժվում և խստությամբ ու դատանարեն, ճնայած այն հանգամանքին, վոր նա, այդ հանցագործությունը, հենց այդ հասարակության հանցանքն և:

Հանցագործները թիմի ավելի յե աճում, քանի ավելի յեն ուժեղանում մարդավայել կյանքով ապրելու բնական պահանջները և քանի ախներ և դառնում զբանց բավարարելու անկարելիությունը ներկա

հասարակական կազմակերպության շնորհիվ. հասարակությունը հանդիսա մնալ չի կարող, մինչև վոր շատեղծի մի նոր կազմակերպություն, վոր հնարավորություն տա ամեն անհատի վարդապետելու իր բոլոր բնգունակություններն ու շնորհքները, բնդարձակ կրթական յեյացի սխտեմի միջոցով սովորեցնել ամենքին սեփական կարողություններն արտահայտելու, վորը հնարավորություն կըտա—շնորհիվ այն ազատության, վոր հիմնված կըլինի ամենքի իրավահավասարություն վրա—գործազրկելու սեփական ուժերն ու շնորհքներն ամեն ասպարեղում և հաստատելու, վոր ամեն մարդ, ինչպես ինքն ըստինքյան հասկանալի յե, իրավունք ունի վայելելու հասարակության ստեղծած բոլոր բարիքները:

Այդ նպատակի իրագործման սեջ առանձնապես շահագրգիռված են ներկա հասարակության յերկու գասակարգերը—պրոլետարիատն ու կանայք:

Փամանակ և, վերջապես, վոր սոցիալիզմն ըմբռնի, թե վորքան մեծ և նրա ձգտումների նշանակությունը կանանց համար և համապատասխան գործունեյություն զիմի: Կինը նուրբ, իր ամբողջ էյությունը թափանցող զգացումով, վոր նա, վորպես ճնշված, տածում և դեպի մյուս ճնշվածները և վորը նրան բնագործեն հույս և ներշնչում, թե մյուս ճընշվածների պատություն հետ վերջանալու յե կամ գոնե մեղմանալու նաև իր ճնշումը—յուրաքանչյուր խոշոր

շարժման մեջ աչքի ընկնող դեր է կատարում, իր բնութեան ամբողջ շերտութեամբ նվիրվելով նրան: Իրան ապացույց քրիստոնեյութեան ծագումն ու տարածումը, միջին դարերի կրոնա-սոցիալական շարժումները, գյուղացիական պատերազմները, ֆրանսիական հեղափոխությունը, հունիսյան սպանդանոցը, կոմմունիստական շարժումը: Մենք հանդիպում ենք կնոջը ուլարա-մոնտանյան և սոցիալիստական բանակներում: Նրանց մասնակցությունը ուլարա-մոնտանյան շարժման մեջ բացատրվում է նրանով, վոր նրանց մտավոր զարգացումը ավելի մեծ չափով, քան պրոլետարներինը, դիմամբ աչքաթող է արվում: Չե վոր ճնշողների առաջին ու գլխավոր կանոնը ճնշվածներին անդիտություն մեջ պահելն է, և այդ ձևով վարվում է յին հասարակության բոլոր խավերի կանանց հետ: Պրոլետար կիսն ավելի յե մոտ բուրժուական կամ արիստոկրատական գասակարգի կնոջը, քան պրոլետար ազամարդը նույն գասակարգերի տղամարդկանց:

Վորտեղ ընտանեկանությունը զարգացման ու վարժություն բացակայության շնորհիվ թույլ է, այնտեղ զգացմունքն և ուժեղ զարգացած: Ի վրաս բանականություն սաստիկ զարգացած այդ զգացմունքը առանձնատես ոգտագործվել և յեկեղեցու ձևքով, վոր սիայն զգացմունքների վրա յե հենվել:

Կինը հավատարիմ է յեկեղեցուն, վորովհետև

հույս ունի նրանով մխիթարություն գանելու իր վշտի ժամանակ, նրանով փրկվելու շարիքներից, վորոնց հանդեպ նա միանգամայն անուղևական է զգում: Իրեն: Սոցիալիզմը նպատակ պետք է զնի ազատելու կնոջն այդ մոլորությունից և խլելու նրան յեկեղեցու ձևքից: Նա մեզ է պատկանում, մենք ենք նրա իսկական ազատագրություն համար կովողը, միայն մեր նպատակների իրագործումով կարող է կիսն իսկապես ազատագրվել ու անկախություն ստանալ, թող ուրեմն նա մեր կողմն անցնի, մեր դաշնակիցը գտնա: Նրա ազատագրության պայքում հաշվի կառնվի վոշ միայն նրա վիճակը, վորպես ամուսնու, այլև նրա քաղաքացի ու աշխատավոր լինելու և առհասարակ հասարակական եակ լինելու հարցը:

Միթե կին ամուսնու շահը չե պահանջում, վոր հասարակական կյանքը խաղաղ զարգանա: Պատերազմն սպառնում է նրան զրկել ամուսնուց նրա յերեխաների հորից ու կերակրողից, ամենալավ պայքում նրա անտեսությունը յերկար ժամանակով խանգարվում կամ բոլորովին քայքայվում է: Պատերազմն սպառնում է նրա վարդուն մահ կամ հաշմանդամություն, վորին նա ցավով ծնել ու իր խնամքի առարկան է դարձրել, յերկու տամնյակ տարուց ավելի պահել պաշտպանել մայրական սրտի ամբողջ զորովով, զիշեր ու ցերեկ նրա մասին մտածել և հույս տածել,

վոր ծերութեան որերին իր միխթարութեանն ու նե-  
ցուկը նա յե լինելու:

Թե վոր աստիճան շահագրգռված պիտի լինեն  
չամուսնացած կանայք, վոր կյանքը խաղաղ ընթացք  
ունենա, այդ յերևում ե վերը բերված թվերից: Պա-  
տերազմը և նրանից բզխող սաստիկ արտագաղթը  
մեծացնում ե ազջկա համար այն հավանականութե-  
թյունը, վոր նա գրկվելու յե ամուսին ու մայր լի-  
նելու կոչումից, իր կյանքի այդ ամենագեղեցիկ ու  
կարեւոր նպատակն իրագործելուց:

Կյանքեր կլանող պատերազմը բազմաթիւ շա-  
րիքներ ե բերում կնոջ համար, վորն անկարող ե ի-  
րերի ընթացքի վրա ազդել, վորովհետե նրա ձայնը  
հաշվի չի առնվում: Նա ծաղր ու ծանակի յե մատ-  
նրվում սահմանափակ տղամարդկանց կողմից, յերբ  
ընտրութեաններին մասնակցելու պահանջ ե գնում  
իր մարդկային ու կանացի իրավունքները պաշտպա-  
նելու համար:

Նույնը պետական և հասարակական կյանքում:  
Կինը ճնշվում ե առանձնապես անուղղակի հարկե-  
րից, ապրուստի միջոցների թանկանալուց ու վա-  
տանալուց, վոր հետեանք ե սպեկուլյացիայի ու խա-  
րերայութեան, վորոնք անհնար են դարձնում ստա-  
ցած գումարով ձեռք բերելու սովորական անհրաժեշտ  
իրերն ու սթեքքները:

Յերբ կինը կը հասկանա հարկային որենքների

նշանակութեանը, նա մի այնպիսի յետանդուն ու հա-  
մարձակ քարոզիչ կը դառնա, վոր չի գիշի ամենա-  
խիղախ տղամարդուն անգամ:

Իսկ կրթութեանը: Միթե կնոջ ամենաբարձր  
շահը չի պահանջում կանոնավոր հիմքերի վրա գնե-  
լու կրթութեանն ընդհանրապես և կնոջ կրթութեանը  
մասնավորապես: Ինչպես պետական ու հասարակական  
հաստատութեաններում նստող տղամարդկանց տիրող  
դասակարգը գանում ե, թե չքավոր մարդու վորդին  
չպետք ե բարձրագույն կրթութեան ստանա, վորպես-  
զի շատ չխելոքանա և շահագործման հակառակորդ  
դառնա, այնպես ել նա, այդ դասակարգը, գանում ե,  
վոր ազջիկները տղաներից անհամեմատ ավելի քիչ  
պետք ե ուսում ստանան, վորովհետե ազջկա ապա-  
զա՝ տղամարդու կամքին հպատակ՝ տնտեսուհու կո-  
չումը հենց այդ ե պահանջում. հասկացող կինը մի  
պտտուհաս ե: Ինչպես դասակարգերի, այնպես ել  
սեռերի տիրապետութեանը միլենույն հետեանքն ե  
տալիս:

Արդո՞ք նույն հետեանքը: Վնչ. կնոջ համար, վո-  
րոջ հանգամանքներում, այդ հետեանքներն ավելի յեն  
ճակատադրական: Վորպես բանվորուհի, նա իր ար-  
հեստի մեջ նույնքան աջողակ ե, վորքան տղամար-  
դը, իսկ նուրբ աշխատանքներում, վորոնց մեջ նա  
առավելապես ընդունակ ե, ավելի յե աջողակ, քան  
տղամարդը: Այնուամենայնիւ նրա աշխատանքն ավել-

լի քիչ և վարձատրվում: Թե բուրժուա ձեռնարկողը  
և թե պետությունը նույն վերաբերմունքն ունեն:  
Պետությունը կանանց պաշտոն և ստալիս փոստում,  
յերկաթուղային հաստատություններում, հեռագրա-  
սաներում: Ինչո՞ւ: Արդյոք մարդասիրությունից դրրդ-  
ված: Ամենեկին. նա այդ անում է այն պատճառով,  
վոր կիսն ավելի եժան է աշխատում, ավելի հոգա-  
տակվող է, քան սղամարդը:

Վորպես բանվորուհի, նա վերին աստիճանի շահագրգռված է ընդհանուր սոցիալական որենադրու-  
թյան մեջ. այն բոլոր հարցերը, վորոնք վերաբերում  
են սղամարդ բանվորներին, հավասարապես շոշա-  
փում են նաև նրա շահերը: Թե այն պայմաններում,  
յերբ արտադրությունը կանգ է առնում, և թե այն  
ժամանակ, յերբ ձգնաժամերին (կրիզիս) հաջորդում  
են արտադրության ամենաեռանդուն գործունեյու-  
թյան շրջանները, այդ բոլորը խորապես ազդում են  
նրա վիճակի վրա: Մի խոսքով՝ վոչ մի հասարակա-  
կան յերևույթ չի կարող կիսով համար նույնքան հե-  
տաքրքրական չլինել, վորքան նա սղամարդու համար  
ունի. իսկ յեթե նա ամուսնացած է, այդ հետաքրքրու-  
թյունն ավելի յե մեծանում:

Կինը, շնորհիվ իր անողնական գրություն, ավել-  
լի մեծ կախումն ունի շահագործողից, քան ամենա-  
յեախն պրոլետարը. նա հաճախ ստիպված է լինում  
իր պատիվն անարգության տալու նրան կամ նրա

ձառայողներին: Մեր գործարաններում, մեր մոդայի  
խանութներում, կանացի ձեռագործի մագազիննե-  
րում, գրասենյակներում, բյուրոներում և այլ տեղե-  
րում աշխատող կանանց զգալի մասը իրենց հրամա-  
յողի կրքերին են ձառայում: Այդ հաստատություն-  
ներից մի քանիսը կատարյալ հարեմներ են: Այդ ստո-  
բացնող ձառայությունը թե կամովին ու հաճույթամբ  
և թե ստիպված անձնատուր յեղողները կանանց սո-  
ցիալական գրություն գոհերն են: Սակայն զեռ բավա-  
կան չէ, վոր շամուսնացած կինը հաճախ իրեն «գո-  
հաբերում է» մի կտոր հաց ավողի կրքերին. լինում  
են դեպքեր, յերբ բարձրաստիճան հարուստ անա-  
ռակը ընտանիք է մտնում և իրեն հյու հպատակ  
ամուսնու աջակցութեամբ կնոջն ստիպում անձ-  
նատուր լինելու: Թե բանվորական և թե պաշ-  
տոնեյության շրջաններում անպակաս են նման  
որինակները: Դրա պատճառը, կրկնում ենք, միմիայն  
մեր սոցիալական պայմաններն են: Իսկ ժամանակա-  
կից հասարակությունը պարծենում է իր բարոյակա-  
նությունամբ, ամուսնական սրբություն և քարոզում ու  
գովում իր բարբերն ու կրթությունը:

Միայն նա կարող է հակառակ յեզրակացություն  
ունենալ, ով այս հասարակությունը քննության է  
առնում անաշտությունամբ: Ուստի և, ceterum censeo  
— միակ յելքն այն է, վոր կյանքի առողջ պատմաներ  
ստեղծվեն սոցիալիզմի հիմունքներով:



Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.



2013

22283

« Ազգային գրադարան



NL0057427

ГЛАВЛИТ № 1025.

Тираж 1000.